ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 10, 1950 *Общественные науки*

Հր. Մուրադյան

ԳՈՒՐԳԵՆ ԲՈՐՅԱՆ

Գուրգեն Բորյանը պատկանում է սովետահայ այն գրողների թվին, որոնց մոտ սովետական գրողի համար բնորոշ և տիպական հատկանիշները դրսևորվում են առավել ցայտուն կերպով։

Ամենահիմնականն ու բնորոշը Բորյանի մոտ նրա բոլշևիկյան պարտականությունն է, կոմունիստական դաղափարականությունը, որով տոգորված է նրա ողջ ստեղծագործությունը։

Անձնվեր կերպով ծառայել սովետական ժողովրդին ու հայրենիքին, Լենինի-Ստալինի պարտիային, բոլոր միջոցներով նպաստել նրա պայքարին հանուն կոմունիզմի հաղթանակի—այս է ահա Բորյանի ստեղծագործության ներքին պաթոսը, այդ մեծ դաղափարով է սնվում և աճում Բորյանը իբրև սովետական հայրենասեր գրող և քաղաքացի։

* * *

Բորյանը գրել սկսում է շատ վաղ։ Նրա ոտանավորները տպագրվում են 15 տարեկան հասակից։ Նա պիոներական և կոմերիտական մամուլի առաջ քաշած և աճեցրած—ստեղծագործական կադրերից է։

1937 թվին տպագրվում է Բորյանի ոտանավորների առաջին գրքույկը, որով նա իր վրա է դարձնում գրական հասարակայնության ուշադրությունը։ Երկու տարի անց, 1939 թ. լույս է տեսնում բանաստեղծի երկրորդ գրքույկը՝ «Արևի համբույրը» խորագրով պոեմը՝ նվիրված Ստալինի ծննդյան 60-ամյակին։ 1940 թվին Բորյանը լույս ընծայեց լիրիկական բանաստեղծությունների նոր ժողովածու՝ «Ճանապարհ դեպի ծով» վերնագրով։

1941 թվին՝ Հայրենական պատերազմի առաջին իսկ օրերից Գ. Բորյանին մենք տեսնում ենք Կարմիր Բանակի շարքերում։ Շուրջ չորս տարվա մարտական կյանքը հերոսական Սովետական Բանակի շարքերում մեծ և խորը ազդեցություն է ունենում բանաստեղծի վրա, որը բնականաբար իր անդրադարձումը գտավ նաև նրա ստեղծագործության մեջ։

Հայրենական պատերազմի ժամանակամիջոցը ինչպես սովետական ողջ բազմազգ գրականության ու նրա ջոկատներից մեկը կազմող սովետահայ գրականության, նմանապես և Գուրգեն Բորյանի ստեղծագործության համար դաս արեց նոր, առավել բեղմնավոր շրջան։ 1941—1945 թվականներին աշխատելով Անդրկովկասյան ռազմաճակատային թերթում որպես ռազմական հատուկ թղթակից-գրող՝ Գ. Բորյանը տպագրել է մոտ 250 բանաստեղծություններ, ակնարկներ և հոդվածներ։ Հիշյալ ժամանակամիջոցում լույս են տեսնում Բորյանի «Մարտիկի երդումը» (1941 թ.), «Կրակե լեզվով» (1943 թ.) և «Հիշատակ» (1945 թ.) բանաստեղծությունների գրքույկները։ Մոսկվայի Գոսլիտիզդատի և Հայպետհրատի կողմից

լույս են ընծայվել Բորյանի բանաստեղծությունների ժողովածուները ռուսերեն թարգմանությամբ։

Հետպատերազմյան շրջանը ևս Բորյանի համար հանդիսանում է ինտենսիվ ստեղծագործական աշխատանքի ժամանակաշրջան։ 1946 թվին նա հրատարակեց «Ծաղկեփունջ» մանկական բանաստեղծությունների ժողովածուն, որը ուշագրավ փաստ էր սովետահայ մանկական գրականության սպարեզում։

1948 թ. լույս տեսավ Բորյանի բանաստեղծությունների նոր ժողովածուն՝ «Երևանյան լուսաբաց» խորագրով։

Ռուբդին Բորյանը զբաղվում է նաև դրամատուրգիայով։ 1947 թ. նա գրում է «Բարձունքներում» հերոսական դրաման, որը բեմադրվում է Երևանի Սունդուկյանի անվան Պետական թատրոնում։

* * *

«Սովետական հայրենիք»—ահա առաջին խոսքը, որ դուրս է գալիս տակավին երիտասարդ բանաստեղծի՝ Բորյանի գրչի տակից, սրբազան մի խոսք, որը նրան ներշնչում է մի կենսախինդ հավատ, մի պայծառ լավատեսություն։

Սովետական հայրենիքի հանդեպ տածած որդիական սերը Բորյանի ստեղծագործության մեջ այն կենտրոնաձիգ ուժն է, որի շուրջը հյուսվում են հեղինակի սրտում ծնունդ առնող բոլոր մյուս հույզերը։ Հայրենասիրության թեման կազմում է Բորյանի քնարի հիմնական լարը։

Բորյանի ստեղծագործությունների առաջին գրքույկը, լույս տեսած 1937 թվին, բացվում է «Խորհրդային իմ հայրենիք» ոտանավորով։

Քեզ բյուր ողջույն, իմ հայրենիք,
Խորհրդային պայծառ աշխարհ,
Ո՞ զավակն եմ հույզերով լի,
Ձայնով հստակ, խոսքով արդար։
Կդան օրեր, կանցնեն հերթով,
Եվ ես հաստատ իմ քնարին,
Պետք է երգեմ հոգով, սրտով
Փառքն ու հմայքն իմ աշխարհի։
Ես տեսնում եմ քո ճամբեքում
Հրաշագեղ մի լույս գալիք,
Եվ ես քոնն եմ, քեզ եմ երգում,
Խորհրդային իմ հայրենիք։

«Խորհրդային իմ հայրենիք» ոտանավորում արտահայտված է երիտասարդ բանաստեղծի հավատամքը։ Բորյանը մեկ ընդմիշտ իր կյանքը, իր բախտը և իր ստեղծագործությունը կապում է հարազատ հայրենիքի կյանքի ու բախտի հետ, սովետական երկրի առաջ ուրվագծվող պայծառ հեռանկարների հետ։

Սովետական երկրի՝ իրրև աշխարհի ամենաառաջավոր երկրի, աշխատավոր մարդկության միակ հարազատ օրրանի այս գիտակցությամբ էլ պայմանավորվում է սովետական մարդու հպարտությունը՝ սովետական

հայրենասիրությունը։ Սովետական հայրենասերի զգացումով, սովետական մարդու հպարտությամբ է ներշնչված Բորյանի «Հրաժեշտի խոսք» բանաստեղծությունը։ Այդ բանաստեղծության մեջ սովետական լայնածավալ երկիրը՝ հարավից մինչև հյուսիս՝ Բորյանին պատկերանում է որպես ժողովուրդների մեծ բարեկամության հայրենիք, մի երկիր, ուր թագավորում է հրաշագործ աշխատանքը, ուր դարբնվում է մարդկության բախտն ու ապագան։

Ազատ է երկիրն իմ, երկնի պես անծայր է,
Երկնի պես շողում է օր ու գիշեր,
Քանի որ աշխարհում ամենից պայծառն է,
Կարող ենք, կարող ենք չհիշել։

Բնորոշ է, որ այս բանաստեղծության համար Բորյանը բնարան է վերցրել Մայակովսկու հանրահայտ տողերը։

Главное в нас
Это наша
Страна советов—
Советская стройка
Советское знамя
Советское солнце.

Սովետական երկիրը միակն է աշխարհի վրա իր ժողովրդի ազատ, ունևոր և լուսավոր կյանքով, իր վեհ իդեալներով, իր վառ ու պայծառ հեռանկարներով։ Այս խորապես ճշմարիտ համոզմունքից էլ ահա բխում է Բորյանի, իրրև սովետական քաղաքացու, օրինական հպարտության զգացումը։

Հայրենի՜ հող, չկա քեզ պես,
Ուրիշ երկիր շեն ու ազատ,
Դու գուրգուրում, սնում ես մեզ՝
Դու մայր անգին ու հարազատ։
(«Իմ երկրի ուժը»)

Սերը սովետական հայրենիքի նկատմամբ Բորյանի մոտ վեր է ածվում խորը և անկեղծ հիացմունքի, համակում նրա ողջ էությունը և որպես ջերմ ու կենսաթրթիռ զգացում սնում է ու ջերմացնում նրա ստեղծագործությունը։

Բորյանի մոտ հայրենիքի հասկացողությունը ևս կոնկրետ է։ Նախ և առաջ այն կերպարանավորվում է սովետական մարդկանց մեջ, իսկ սովետական նոր մարդը, դա՝ նախ և առաջ ազատ ստեղծագործական աշխատանքի մարդն է։

Հոկտեմբերյան Մեծ Ռևոլուցիան ազատագրեց բուրժուական կարգերի կողմից կաշկանդված բազմահազար մասսաների ուժը, նրանց ձեռներեցությունը, աշխատանքը դադարեց տառապանք լինելուց, դարձավ պատվի գործ։ Մասսաները լծվեցին ազատ ստեղծագործական աշխատանքի, սոցիալիստական աշխատանքը դարձավ մարդկային անհատականության ակտիվ

դրսևորման միջոցներից մեկը։ Բորյանին հուզում և ոգևորում է մասնավորապես սովետական երիտասարդությունը՝ աշխատանքով, սիրով և երազանքներով բովանդակավորված նրա կյանքը։ «Երգ գրված մի երեկո» ոտանավորը նվիրված է սովետական երիտասարդությանը, այն երիտասարդ հայրենասերներին, որոնց ջանքերով շքեղորեն վերակառուցվել և ծավալվել է նոր Երևանը, հարազատ մայրաքաղաքը.

Հազար աղջիկ, հազար տղա թև թևի,
Նոր խոհերով, այնքան թեթև, գեղանի,
Անցնում են, տես, բյուր շարքերով լուսերես,
Բոցավառում ջահել հոգիս հրակեզ։

Բանաստեղծին խանդավառում է այն միտքը, որ ինքն էլ մասն ունի սոցիալիստական նոր Երևանի վերակառուցման գործի մեջ։

Օրորվեցեք, կանաչ ծառեր, ծփանքով,
Օրորվեցեք ձեր հասակով նրրածին,
Չէ՞ որ այսօր ձեր շարքի մեջ հրճվանքով
Երջանկության չքնաղ ծառը տնկեցի...

Իբրև իսկական սովետական հայրենասեր Բորյանը դաստիարակվել է կոմերիտմիության շարքերում։ Կոմսոմոլն ինքը հանդիսանալով ծնունդ սովետական իրականության, միաժամանակ հանդիսանում է պարտիայի ղեկավարությամբ և նրա հետ մեկտեղ այդ իրականությունը կերտող երիտասարդ ուժը։ Սերը, երախտագիտությունը և պարտավորվածությունը Կոմսոմոլի հանդեպ դառնում է Բորյանի հայրենասիրության արտահայտություններից մեկը։ «Կոմերիտմիությանը» բանաստեղծության մեջ հետևյալը գրում է։

Ուր էլ հասնեմ, ես քոնն եմ,
Քո դավակը անտրտում,
Նոր աշխարհը երգողն եմ
Քո վառ սերը իմ սրտում։
Քո վառ սերը թանկագին,
Փարոսի պես բոցավառ,
Նորափթիթ իմ երգին
Լույս է տալիս անդադար...

Եթե Բորյանն իրեն պարտավորված է զգում կոմսոմոլի հանդեպ, իբրև նրա սանը, ապա ողջ կոմերիտմիությունը, այդ թվում նաև ինքը անձամբ խորապես պարտական են սովետական հայրենիքին, որովհետև սովետական հայրենիքն է նրանց ծնել, սնել, նրա հետ է կապված նրանց ներկան և ապագան։

Ով է, որ իրեն բարձրացրել է, ներշնչել բարձր հույզեր, ազնիվ ու վսեմ գաղափարներ, հարցնում է պոետը և պատասխանում.

... Այդ երկիրն է իմ լուսավոր,
Անպարտելի ու փառավոր,
Որին պարտք եմ ես զույգ ձեռքով
Եվ բարձրացող իմ նոր երգով...

Սովետական երկրի և սովետական երիտասարդության փոխհարաբերությունը Բորյանը պատկերացնում է իբրև հոգատար ծնողի և երախտագետ զավակի փոխհարաբերություն։

«Սայլվոր տղա» բանաստեղծության մեջ Բորյանը սովետական մի փոքրիկ սայլվոր տղայի համար այսպիսի «գուշակություն» է անում.

Այսօր փոքրիկ մի մանուկ ես,
Մեր լայն երկրի դալար ճյուղն ես.
Վաղը կերթաս Կարմիր Մոսկով.
Կգաս լեցուն ոսկե խոսքով,
Սայլվոր տղա, հեյ ջան տղա,
Ազատ երկրի, աղատ տղա։

Այստեղ Բորյանը պարզ ու սեղմ մի քանի տողերի մեջ կարողացել է բացահայտել սովետական կարգերի մի կարևոր առանձնահատկությունը, սովետական երկրի՝ ի տարբերություն բուրժուական կեղծ դեմոկրատիզմի՝ իսկական դեմոկրատիկ բնույթը, սովետական հայրենիքի հոգատարությունն ու սերը «հասարակ» մարդկանց նկատմամբ։

Սովետական մարդը իր ուժերն ու կարողությունները անսահմանորեն զարգացնելու հնարավորությամբ է օժտված, ուստի և շատ բնական է, որ այսօրվա «հասարակ» սայլվոր տղան, վաղը սովետական կյանքի ոսկի ճշմարտությունները ոսկի խոսքով արտահայտող մեր հայրենիքի անվանի մարդկանցից մեկը կարող է դառնալ։

Բորյանի, իբրև սովետական երիտասարդի, երիտասարդ պոետի կենսախինդ տրամադրությունը, կենսահաստատ աշխարհայացքը իր վառ արտահայտությունն է գտել նաև նրա բնության երգերի մեջ։

Բնությունը_Բորյանի հուդաշխարհին առատ սնունդ է տալիս։ Բորյանի երգած բնությունը արևաշող է ու լուսապայծառ. դա լավատես ու կենսախինդ հոգու ընկալած աշխարհն է՝ ողողված արևի հորդ լույսով, ծածկված վառ կանաչով, գունագեղ ծաղկունքով։ Եթե Բորյանը գիշեր է պատկերում՝ հապա այն լուսնկա և աստղալի գիշեր է, որ հեղինակին թվում է որպես լույսերի ծով։

Բորյանի բնության երգերի մեջ հեղինակի համար ամենաբնորոշ օրինակներից մեկն է «Այս առավոտ» բանաստեղծությունը։

Ահա բացվեց անուշ լույսով այս առավոտ,
Այս առավոտ ոսկե արև ինձ ծիծաղեց,
Սիրտս ծփաց, հոգիս գգաց անծիր կարոտ,
Օ՜հ, ինչ քաղցր ես լուսափրփուր իմ առավոտ։

Պատուհանիս դեմ հանդիման մի վառ երկինք
Տենչանքիս պես խորունկ ու վեհ հուր առավոտ,
Դու ես ժպտում լուսե շրթով ջահել սրտիս,
Ո՜նչ անուշ ես, լուսափրփուր իմ առավոտ։

«Զմռան ուրախություն» բանաստեղծության մեջ արտահայտություն է գտել հեղինակի՝ իբրև սովետական իրականությանը փարած և իր վիճա-

կից անսահմանորեն զոհ ու երջանիկ մարդու կենսախինդ տրամադրությունը։

Ս՛, իրիկուն ձմռան, տեսիլք դու մարմարե,
Սիրո նման քաղցր, սիրո նման չքնաղ,
Թափիր առատ, թափիր բյուրեղներդ լուսե,
Մեր երջանիկ, խաղաղ կտուրների վրա։

Սովետական գրողի համար ձմեռը, ձյունը, սառույցը դադարել են կյանքի դժնդակությունն արտահայտող, բռնությունն ու բռնակալությունը այլաբանորեն բացահայտող պատկերներ և ալեգորիաներ լինելուց, որովհետև մեզ մոտ վերացել են նման մտապատկերներ ծնող սոցիալական պատճառները, ինչպես և սովետական մարդկանց համար ձմեռը դադարել է աղետ ու արհավիրք համարվելուց։

Այսպես ահա, միանգամայն առողջ սկզբունքներով գրական կյանք մտավ Գուրգեն Բորյանը։

Սակայն, Բորյանի գրական առաջին քայլերը զերծ չէին թերություններից։ Հիմնականում այդ թերությունները վերաբերվում էին հեղինակի արվեստին, որը դեռևս պրիմիտիվ էր, ոչ ինքնուրույն։ Բանաստեղծը թեև հաջողությամբ լուծել էր ինքնուրույն թեմատիկայի հարցը, սակայն արվեստի բնագավառում նա ապրում էր ուսումնասիրության շրջան, օգտագործելով Հակոբ Հակոբյանի և Հովհաննես Թումանյանի տրադիցիաները։ Եթե քաղաքական մոտիվների մեջ լսվում էին Հակոբ Հակոբյանի խրոխտ և հատու շեշտերը, ապա բնության երգերի ու գյուղական անցյալի պատկերման բնագավառում՝ նկատվում էր Թումանյանի շունչը, բնության վեհության Թումանյանական զգացումը։ Զավազանց դրական էր անշուշտ այն փաստը, որ բանաստեղծն իր գրական ուսումնասիրության բնագավառում կանգնած էր առողջ ուղու վրա, օգտագործելով մեր անցյալի պոեզիայի երկու խոշորագույն դեմքերի, բառիս իսկական իմաստով ժողովրդային արվեստի երկու լավագույն ներկայացուցիչների տրադիցիաները։

Ավելի խորն ու սկզբունքային էր Բորյանի վրա Մայակովսկու ազդեցությունը։ Սովետական մարդու հպարտության զգացումը, կապիտալիստական աշխարհի համեմատ սովետական երկրի բացառիկության և հակադիր բնույթի գիտակցումը, որ հանդիսանում են Բորյանի ստեղծագործության իդեական հիմքերը, իրենց սկիզբն են առնում սովետական դարաշրջանի մեծագույն բանաստեղծ Մայակովսկու ստեղծագործությունից։ Մայակովսկու պոեզիայի մեջ էր, որ առաջին անգամ բանաստեղծական վառ արտահայտություն ստացավ սովետական մարդու գիտակցությունը իր հայրենիքի, սովետական սիստեմի և այդ սիստեմը կերտող մարդկանց գերազանցության մասին, այլ խոսքով ասած, սովետական պատրիոտիզմի մասին։

Բորյանը միանգամայն սթափ էր նայում իր արվեստի անկատարությանը, նա լրիվ չափով իրեն հաշիվ էր տալիս այն պատասխանատվության մասին, որը դրվում էր իր վրա իբրև ստեղծագործողի։ Բորյանը խորապես գիտակցում էր, թե որքան բարձր է սովետական ընթերցողների քաղաքական գեղարվեստական պահանջը և թե դեռ որքան նա պետք է տքնի այդ պահանջը բավարարելու համար։

Բանաստեղծի երազանքները կապված ստեղծագործական բարձր նվաճումների հետ, վառ արտահայտություն են գտել նրա «Ծովը առավոտյան» և «Ծովափին» ոտանավորներում։

Ծով ալեգորիայով պոետը պատկերացնում է կյանքը՝ անհուն և անեզրական։ Իսկ կյանքը ճանաչելու, նրա իմաստությունն ու անհունությունն ընդգրկելու համար հեղինակը գիտակցում է, որ պետք է մշտապես ունկնդրել նրա ձայնին։

«Ծովը առավոտյան» բանաստեղծության մեջ պոետը դիմելով ծովին, գոչում է.

Տուր անհունություն, որ իմ երգերով
Թափանցեմ հզոր շրերիդ խորքը...

«Ծովափին» բանաստեղծության մեջ հեղինակը գրում է.

Խոր մանկությունից երազել եմ ես
Ունկնդրել ծովի խոլական երգին,
Անծայր ջրերի ծփանքների պես,
Ծով իմաստությամբ լցնել իմ հոգին։

և ապա.

Թևեր է առնում իմ փնտրող հոգին,
Այս կապույտ ծովի անվրդով ափին
Ու թվում է ինձ երգերիս վրա,
Իջնում է պայծառ, նրբակերտ արփին։

Եվ այսպես, իր ստեղծագործական առաջին իսկ քայլերից հեղինակը հանդես է բերում մի չխուլացող զգոնություն, որը բանաստեղծի մեջ նստած, միշտ արթուն կերպով հսկում է, որպեսզի նրա մոտ չնվազի պատասխանատվության գիտակցությունը, չմոռացվեն արվեստի բարձր պահանջները, և, որ ամենագլխավորն է, որպեսզի նա մշտական սերտ կապի մեջ լինի կյանքի հետ։

Իր բանաստեղծությունների երկրորդ ժողովածուն Դուրգեն Բորյանը վերնագրել է «Ճանապարհ դեպի ծով», հասկանալով այդ անշուշտ այն իմաստով, որ նա ստեղծագործորեն արդեն աճել է, կամ գտնվում է աճման ճանապարհին։ Հիրավի, Բորյանը իր նոր գրքով շարունակելով նախորդ գրքի իդեալես և արվեստով միանգամայն առողջ տենդենցները, ձգտում է արտահայտչական ավելի բարձր ձևերի, ինչպես և առավել լայն թեմատիկ ընդգրկման։

Բանաստեղծը հարստանում է կենսափորձով, առավել խորն է ըմբռնում սովետական կյանքի աննախընթաց պատմական նշանակությունը, մարդկության պատմական առաջընթացի մեջ սովետական մարդկանց՝ իբրև կոմունիզմի կերտողների պատմական մեծագույն միսիան։

Այն, ինչ որ դարերի ընթացքում առաջավոր մարդկությունը երազել է, որին, սակայն, նա չի հասել, ահա այդ բազմադարյան երազանքը՝ կյանքը երկրի վրա երջանիկ դարձնելու մասին, բանաստեղծը իրականացած է տեսնում սովետական հայրենիքում, սովետական մարդկանց ձեռքով։

Սովետական երկրում վերացվել է սոցիալական չարիքը։ Սովետական աշխարհը դարձել է լիության և առատության աշխարհ, երջանիկ մարդկու-

թյան հայրենիք։ Բանաստեղծի «Լիության երգը» սովետական երջանիկ կյանքին նվիրված մի ներբող է։

Անցնում եմ ահա մեր լայն դաշտերով,
Արևն է շողում երկնի կապույտից,
Եվ թեավորված հազար իղձերով
Ծփում է սիրտս սիրուց, կարոտից։

Լսում եմ հասկի շշուկն հարազատ
Եվ արոտների սոսափյունը մեղմ,
Հայրենի երկիր, հող դու իմ աղատ
Քո շունչն եմ ղղում, քո բույրն ամեն տեղ...

... Երկինքը պայծառ կապել է կամար
Սեն է աշխարհն իմ, հզոր ու ջահել,
Շողա, լույս սփռիր դու հավետ անմար,
Մեր սովետական կենսատու արև։

Այնուհետև Բորյանը, իբրև հայ ժողովրդի զավակ, մի ուրիշ երջանկություն ևս ունի, կապված սովետական բազմազգ ժողովուրդների մեծ և համերաշխ ընտանիքում հայ ժողովրդի դարավոր երազանքների և իղձերի իրականացման հետ։ Այստեղից էլ Բորյանի, իբրև սովետահայ բանաստեղծի զգացումն իր հայրենիքի և ժողովրդի հզորության, նրա ուժի ու անպարտելիության մասին, քանի որ Բորյանի ժողովուրդը և հայրենիքը ոչ թե նախկին միապետական Ռուսաստանի հետամնաց ծայրագավառում կուչ եկած ճնշված և անպաշտպան երկիրն ու ժողովուրդն է՝ «խեղճ հայ ազգը», այլ մարդկության բախտը դարբնող սովետական ժողովուրդների մի մարտական ջոկատը, սովետական մեծ ընտանիքի բաղկացուցիչ մասը։

«Գովք Հայաստանի» բանաստեղծության մեջ Բորյանը գրում է.

Եվ ոչ մի Բել, ոչ մի Կյուրոս,
Ոչ մի Լուկուլլ, կամ թե Դարեհ,
Չեն հանդգնի լկտի գոռող,—
Քո սահմանները պաշարել.
Քանդի հզոր եղբայրներիդ
Անհուն սիրով անդավաճան,
Աղատ ես դու և երջանիկ,
Ո՜ւ նորաստեղծ իմ Հայաստան։

Ի տարբերություն հայ անցյալ դրականության, սովետահայ գրականության և դրողի համար վերացել է ազգային վշտի մոտիվը, մի մոտիվ, որ մեր անցյալ գրականությունը հաճախ դարձնում էր արցունքոտ։

Պատկերելով սովետական հայրենիքի մեծ հաղթանակները, նշմարելով ապագայի պայծառ հեռանկարները, երգելով սովետական ժողովուրդների, ինչպես նաև հարազատ հայ ժողովրդի և վերջապես իր, իբրև սովետական անհատի երջանիկ կեցությունը, Բորյանն ընդգծում է պարտիայի ղեկավար դերը, իր հայացքն ուղղում Կրեմլին, որտեղից ծնունդ են առնում կոմունիզմի կառուցման մեծ գործի հետ կապված բոլոր իմաստուն գաղափարները։ Ինչպես սովետական յուրաքանչյուր քաղաքացու, այնպես

Էլ Բորյանի համար Կրեմլը հանդիսանում է մեր հաղթանակների սիմվոլը, այնտեղ է ժողովուրդների մեծ առաջնորդը՝ Ստալինը, այնտեղ է դարբնվում մարդկության ներկան և ապագան։

Եվ նայում եմ երջանկությամբ լուսաբեր
Ես Կրեմլի աշտարակին անդադար,
Այդ իմ աստղն է և ձեր աստղը, ընկերներ,
Որ շողում է և կշողա դարեդար...
(«Մեր աստղը»)

Բորյանը գալիքը պատկերում է էլ ավելի լուսապայծառ, էլ ավելի հրաշալի, ուստի և նա անդուսպ մի տենչանք է արտահայտում գալիքի նկատմամբ, երազում տեսնել այդ «հրաշք ու նոր աշխարհը»։

Այս դետի մեջ մի կաթիլ,
Մի կաթիլ ես լինեի,
Կյանքի ուրախ մեր ափից—
Դեթ կաթիլ ես լինեի,
Ժամանակի հորդահոս
Ալիքներն ինձ տանեին
Տաներին ու հանձնեին
Հրաշք ու նոր աշխարհին...
Որ տեսնեի մի վայրկյան
Դարերի իդձը անշեջ։
Անէանար թող այնժամ՝
Կյանքս այդ նոր դետի մեջ։
(«Մի կաթիլ ես լինեի»)

Ապագայի հանդեպ ներկա սերնդի վառ հավատով և պարտքի վեհ գիտակցությամբ է տոգորված նաև Բորյանի «Երգ ժամացույցի մասին» բանաստեղծությունը։

Ոչ հայ և ոչ էլ համաշխարհային գրականության համար նորություն չէ այսպես կոչված «ժամացույցի մոտիվը»։ Անցյալի անհեռանկար ու հոռետես բանաստեղծները ժամացույցի միջոցով երգել են աշխարհի ունայնությունը, կյանքի անցողիկ լինելը, ժամանակի անսահմանության մեջ մարդկային կյանքի ակնթարթային բնույթը, մարդու մահվան դատապարտվածությունը և այլն։ Այլ կերպ է, սակայն, սովետական պոետն ընկալում ժամն ու ժամանակը։ Նա վախ չունի ժամանակից, որովհետև մարդն իշխում է ժամանակի վրա, ժամանակը ծառայում է նրան, նրա վեհ իդեալներն ու այդ իդեալների առարկայական արտահայտությունը հանդիսացող սովետական իրականությունը անմահ են։ Կոմունիզմի մեծ գործին նվիրված սովետական մարդու համար ապագան նույնքան ռեալ է ու շոշափելի, որքան նրան շրջապատող առօրյան։ Բորյանը դիմելով «ժամանակի անդուլ զինվորին»—ժամացույցին, ասում է.

Ասա դու ինձ, ժամանակի
Ճամբով անցած անդուլ զինվոր,

Տեսել ես դու կյանք մի ուրիշ
Այսքան ազատ ու բախտավոր։
Եվ ասա ինձ, որ քո երթով
Պիտի քայլես դեպ ապագան,
Ե՞րբ են եղել ժամն ու բոպեն
Այնքան վեհ ու նվիրական։

Պոետը խորապես համոզված է, որ զալիք մարդը ժամացույցի զարկերի մեջ պիտի զգա այսօրվա սովետական մարդկանց սիրտն ու հոգին, որովհետև սովետական մարդկանց սիրտն ու հոգին բարախում են դարերի հետ խոսող մեծ գործի համար, զալիք սերունդների համար.

Պատմիր զալիք մարդուն ջահել
Ո՞վ ժամացույց, զարկով համառ,
Թե ինչպես ենք մենք կյանք կռել
Ժողովրդի բախտի համար,—
Եվ մեր դարից վառ ու անշեջ,
Որպես նվեր,— սիրով անգին,
Նա կգտնի զարկերիդ մեջ,
Մեր բոցավառ սիրտն ու հոգին։

Այս շրջանում Բորյանի թեմատիկան հարստանում է նոր մոտիվով՝ սիրո մոտիվով։

Սովետական կյանքին փարած մարդու և պոետի զգացմունքները վառ արտահայտություն են գտել նաև նրա սիրո լիրիկայում։ Առողջ և բարձր բարոյականության օրինակ հանդիսացող սովետական երիտասարդի համար սերը ոչ տառապանքի աղբյուր է և ոչ էժանագին հաճույքի միջոց. այն մի բարձր զգացմունք է, որ ընդունակ է մղում տալու մեծ ու ազնիվ գործերի։ Այդպիսին է Բորյանի երգած սերը։ Սոցիալապես առողջ, իդեապես բովանդակալից և հասարակականորեն օգտակար մի զգացում է այն։

Բորյանի մոտ արտահայտություն գտած երջանիկ սիրո մոտիվը դա նրա սովետական կյանքից բավարարված լինելու երջանիկ զգացման, կյանքի հանդեպ ունեցած անսահման սիրո արտահայտության եղանակներից մեկն է։ Բորյանի սիրային լիրիկայի բնորոշ նմուշներից մեկն է «Կանգ առ վայրկյան, էլ մի անցնիր» բանաստեղծությունը։ Բանաստեղծն իր սիրածի ներկայությունից անհունորեն իրեն երջանիկ է զգում, ոչինչ չի խափանում սիրահարների ուրախությունը, ոչինչ չի սպառնում նրանց բախտին. այս է պատճառը, որ նրանք տենչում են, որպեսզի անհունորեն երկարի ժամադրության պահը, դառնա անվերջ ու հավերժ.

Սիրտս բացել աշխարհի դեմ, ինչպես արփին շռայլածին,
Նստել եմ ես սիրածիս հետ, կանգ առ վայրկյան, էլ մի անցիր։

. . . . . .

Էս իրիկուն կարծես տերն եմ հար զնգացող տիեզերքիդ.
Հավերժ լինես հրաշք վայրկյան, էլ մի անցիր, էլ մի անցիր։

Մարդկայնորեն ազնիվ և բարձր այդ զգացման գեղեցիկ արտահայտություններից են նաև Բորյանի «Վայրի վարդեր», «Հավերժական երգ», «Այս ճանապարհը անվերջ լիներ», «Նորք», «Ոչինչ, ոչինչ չեմ մոռացել» բանաստեղծությունները։

Դուրգեն Բորյանն իր ստեղծագործության մեջ երգելով սովետական մեծ առօրյան իր աշխատանքային պաթոսով, սովետական մարդկանց վեհ ձգտումներով և խիզախ ձեռնարկումներով, պայքարով ու սիրով, չի մոռանում, սակայն այն փաստը, որ հարազատ հայրենիքը գտնվում է կապիտալիստական գիշատիչների շրջապատում։ Հայրենիքի հողի սրբազանության և անձեռնմխելիության գաղափարը, սովետական պետականության պաշտպանության հարցը սովետական մարդկանց համար կյանքի և մահու հարց է։ Կենսական այդ շահագրգռվածությամբ էլ պայմանավորվում է նրանց վճռականությունը անհրաժեշտության դեպքում աշխատանքային գործիքը զենքով փոխարինելու...

Բորյանի «Սովետական օդաչուների երգը» բանաստեղծությունը գալիք պատերազմի նախազգացման արդասիք է։

Իսկ թե մութ ամպերը կուտակվեն,
Եթե սև թշնամին մահ գուժի,
Կելնենք վեր մենք խիզախ, անձնվեր,
Կսարսի թշնամին մեր ուժից։
Պատրաստ ենք քո կոչին Առաջնորդ,
Որդիքդ անբաժան քեզանից,
Չի առնի թշնամին ոչ մի օր
Ո՛չ մի թիզ մեր աղատ երկնքից։

* * *

Հայրենական պատերազմի մեծ և ահեղ օրերը Բորյանն ընդունեց միանգամայն նախապատրաստված թե՛ իբրև պոետ և թե՛ որպես զինվոր։ Բորյանի «Սովետական օդաչուների երգը» և «Ամպրոպ» բանաստեղծությունները մի տեսակ կամուրջ էին հանդիսանում հեղինակի նախապատերազմական և պատերազմական շրջանի ստեղծագործությունների միջև։

Հայրենական պատերազմի տարիներին սովետական գրականությունը բուռն զարգացում ապրեց։ Բորյանի ստեղծագործությունը այդ երևույթի ակնառու ցուցանիշներից մեկն է։

Բորյանի հայրենասիրական խոսքը պատերազմի օրերին հնչում է նոր ուժով։ Հայրենիքի սերը կլանում է նրա ողջ էությունը, կյանքը և մահը իմաստավորվում են հայրենիքի հետ կապված, նրանով պայմանավորված։

Պատերազմի ժամանակաշրջանում գրված Բորյանի ամբողջ ստեղծագործությունը շաղկապված է մի միասնական գաղափարով՝ ֆաշիզմի դեմ մղվող մեր ժողովրդի հերոսական պայքարի հաղթանակի հավատով։ Բանաստեղծի այդ հավատը սնունդ է առնում կյանքից, արտահայտում է սովետական ժողովրդի խոր համոզմունքն իր վերջնական հաղթանակի նկատմամբ։ Թշնամու նկատմամբ բանաստեղծի կատաղի ատելությունը ծնունդ է ստանում հարազատ հայրենիքի հանդեպ ունեցած անհուն սի-

րուց։ Որքան խորն է սիրում հարազատ հայրենիքը, այնքան նա խորն է ատում նենգամիտ թշնամուն, այնքան ցասումնալի է դառնում նրա բանաստեղծական խոսքը։

Պատերազմական ժամանակաշրջանի Բորյանի բանաստեղծությունների առաջին գրքույկը «Մարտիկի երգումը» խորագրով, լույս տեսավ 1941 թվականին։ Գրքույկը բացվում է «Ստալինի կոչը» բանաստեղծությամբ։ Հեղինակը լսել է մասսաներին ոտքի հանող և գոտեպնդող Առաջնորդի խոսքը և թշնամու վախճանն ազդարարող այդ ահեղ խոսքով խանդավառված՝ նա դալիք հաղթանակի ցնծությունն է ապրում։

Բորյանը ցույց է տալիս մեր բազմազգ հայրենիքի միասնականությունը, սովետական ժողովուրդների նպատակների ընդհանրությունը, նրանց համախմբվածությունը մեծ Առաջնորդի շուրջը։

Եվ պատասխանեց երկիրն հայրենի
Իր առաջնորդի մարտական խոսքին,—
Անծայր դաշտերից և հովիտներից,
Բարձր լեռներից և ծովափերից,
Քաղաքից, գյուղից բարձրացավ վսեմ
Անհուն և անափ ալիքը սիրո,
Եվ ցասման ոգին, բազուկը հզոր
Ընդդեմ դավադիր արնոտ թշնամու։

Ոտքի կանգնած բազմամիլիոն սովետական մարդկանց արդար ցասումն է, որ հանդիսանում է երաշխիքը դալիք մեծ հաղթանակի։

«Հաղթանակը մերն է, ընկերներ»—այսպես է վերնագրել Բորյանը իր բանաստեղծություններից մեկը։ Բանաստեղծը այսպես է համոզված, որովհետև նա գիտե, որ իր ժողովուրդը, Կարմիր Բանակը, դենք են վերցրել արդար գործի համար, նրանք հանդես են եկել կատարելու ազատագրական մեծ դեր, իրենց մեջ դգալով բարոյական մեծ, անպարտելի ուժ։

Չկա աշխարհում քո ժողովրդի
Ուժին հանդիման և ոչ մի պատվար,
Կըդնանք գրոհ, կըդնանք մարտի,
Հայրենի՛ երկիր—միայն քեզ համար։
Դու—բարձր ու վսեմ, դու արեգական,
Դու, որ տալիս ես մարդուն կուռ թևեր,
Չի պակսի, մայր իմ, քո հողից անգամ
Գարնանը ծլած և ոչ մի տերև։

Իր կրծքի տակ դգալով միլիոնավոր սովետական մարտիկների սրտի բաբախը՝ Բորյանը նրանց անունից հանդիսավոր երգում է տալիս հայրենիքին.

Լինել անհողդողդ, լինել աննահանջ,
Եվ կուռ ստալինյան պողպատ գնդերով
Թշնամու վրա անհաղթ արշավել,
Եվ հաղթանակի բյուր դափնիներով
Քո հպարտ ու սեգ ճակատն համբուրել։

Հաղթանակի նույնպիսի անկեղծ հավատով է տոգորված «Տար մեզ Ստալին, դեպ վերջին կռիվ» բանաստեղծությունը։ Այն փաստը, որ սովետական զորքերին Ստալինն է առաջնորդում դեպի մարտ՝ ինքնըստինքյան գրավական է մեր հաղթանակի։

Հայրենական պատերազմի մարտական առաջին իսկ օրերին Բորյանի ստեղծագործությունը տվեց հերոսական այդ օրերին համապատասխան խրոխտ երկեր, որոնք իրենց մեջ պարունակում էին ժամանակի ոգեշունչ ոգին։

Ռազմաճակատում Բորյանը տեսնում է մեծ և անեղ այդ օրերի հերոսներին, մարդկանց, որոնք իրենց ուսերի վրա տարան պատերազմի անավոր ծանրությունը, որոնք իրենց կյանքի գնով ձեռք բերեցին հաղթանակը։

«Պատասխան» ոտանավորում նկարագրվում է, թե ինչպես քաղղեկ Բելովը ծանր վերք ստացած պառկած է բլինդաժում, որին, սակայն, սեփական ցավը հայրենիքի մեծ սիրո առաջ չափազանց դժդուն է թվում։

«Աղջկան, որի մազերը ճերմակել են» ոտանավորում Բորյանը պատկերում է վառվռուն մի սովետական աղջկա, որի մազերը պատերազմի արհավիրքի օրերին վշտից ճերմակել են։ «Տանջանքի և ցավի ձմեռը խստասիրտ», ասես ձյուն է մաղել նրա գլխին։ Երեկ, սակայն, այդ աղջիկը «Մայիս էր, վառ գարուն» և «Վիշտը չէր անցնում նրա տան դռներով»։

«Տունը» բանաստեղծության մեջ Բորյանը նկարագրում է մի իսկական սովետական հայրենասերի՝ մի պառավ կնոջ, որը թշնամական բանակի առաջխաղացման հետևանքով ստիպված պետք է թողներ իր տունը, սակայն չկամենալով թեկուզ ժամանակավորապես թողնել այն թշնամուն՝ հրդեհում է։

Այրվիր, մինչև վերջ, հայրենի տնակ,
Այրվիր... մոխիրդ թող տանի քամին...
Թե չեմ ապրելու ես իմ հարկի տակ,
Չպետք է ապրի և չար թշնամին։

«Անմահություն» բանաստեղծության մեջ նկարագրում է պատերազմի նահատակներից մեկի, մի հերոսի հուղարկավորությունը.

Առանց արցունքի, բայց լացող սրտով,
Նրանք հերոսին հողին հանձնեցին
Եվ գերեզմանին հրե տառերով
Զինակիցներն այսպես գրեցին.
«Ննջում է այստեղ քաջը լուսանուն,
Որ կյանքը զոհեց իր հայրենիքին
Մեզ այս շիրիմից մահը չէ նայում,
Այլ անմահության հավերժող ոգին։

Հայրենիքին զոհված հերոսի համար չկա մահ, նա անմահ է, կրկնում է Բորյանը, հազարամյա վայելմություն ունեցող, սակայն հավետ թարմ ու ճշմարտացի այս իմաստությունը։

«Քույրը» բանաստեղծության մեջ Բորյանը պատկերում է արի ու անձնազոհ ճակատային մի քրոջ։ Նրա հոգատարությունը մարտիկների նկատմամբ այնքան ջերմ է, անմիջական և անկեղծ, որ հեղինակին թվում

է. թե սովետական այդ տղջկա մեջ իր վաղուց մեռած հարազատ քույրն է վերակենդանացած։

Քույրս է հարազատ
Կորցրել էի, բայց սորից գտա...

Բորյանի բանաստեղծական խոսքը հնչում է է՛լ ավելի ուժգին, երբ Ստալինգրադի պատմական մեծ և հաղթական ճակատամարտից հետո հիմնովին փոխվում է պատերազմի ընթացքը, երբ թշնամին Կարմիր Բանակի ջախջախիչ հարվածների տակ ստիպվում է թողնել ժամանակավորապես գրավված քաղաքներն ու ավանները։ Սկսվում է Սովետական Բանակի հաղթարշավը մինչև Բեռլին։ Այդ օրերին բանաստեղծը մի վառ տենչ ունի, մի բուռն ձգտում, ստեղծագործությամբ հետ չմնալ սովետական զորքերի հաղթական երթից, կարողանալ արտահայտել այդ վեհ ու խանդավառ օրերի պաթոսը։

Այդ շրջանում են ստեղծվում նրա մի շարք լավագույն բանաստեղծությունները՝ «Կովկասի զավակներին», «Ելիր Ուկրաինա», «Կիև», «Երգ Սևաստոպոլի գրավման», «Զրույց իմ զտեր հետ», «Մեր հաղթանակն եմ ես երգում», «Կամ վահանով, կամ վահանին», «Հայրենիք», «Երգը» և այլն։

Հայրենական պատերազմի 5 ծանրագույն տարիներին սովետական մարդկանց գործադրած հերոսական ջանքերը, նրանց անձնազոհ պայքարը ճակատում և թիկունքում, մարդկային մեծ զոհերն ու անասելի զրկանքները ապարդյուն չանցան։

Ֆաշիզմը ջախջախվեց, մարդկությունը փրկվեց կործանումից, իսկ սովետական ժողովրդի այդ սխրագործությունն էլ ավելի բարձրացրեց նրա հեղինակությունը աշխարհի առաջավոր մարդկության աչքին։

Սակայն Բորյանը խաղաղության օրերին ճառագող արևը տեսնում էր դեռևս պատերազմի մրրիկների մեջ, նախաճաշակելով այն երջանկությունը, որ սպասվում էր հետպատերազմյան շրջանի խաղաղ ստեղծագործական օրերին։

Բորյանի հետպատերազմյան ստեղծագործության ոգեշնչողը նորից սովետական մարդն է, հերոսական այն ժողովուրդը, որ անցնելով Հայրենական մեծ պատերազմի դարբնոցով, է՛լ ավելի վեհացավ, է՛լ ավելի գեղեցկացավ, էլ ավելի հերոսացավ։ Իր գրչակից և զինակից ընկերոջը՝ մարտիկ գրող Դ. Սևունցին նվիրած «Վերադարձ» ոտանավորում Բորյանը գրում է.

Թերացել ենք մի փոքր՝ և՛ ես և՛ դու
Անչափ դժվար էր ուղին, ճամբան անցած,
Բայց Երբ, Երբ ենք եղել ասա, այսքան խնդուն,
Այսքան հպարտ, հզոր, ջահելացած...

Բորյանի այս նոր, էլ ավելի վառ, ավելի պայծառ տրամադրությունը, նրա մեծ հավատը սովետական երկրի՝ մեծ ու պայծառ ապագայի հանդեպ, իր լիարյուն արտահայտությունն է գտել նրա «Երևանյան լուսարացը» բանաստեղծության մեջ։

Թող իմ երգն էլ դառնա ընկեր ճանապարհիդ,
Դու ձգտում ես դեպի վեհն ու երազածը,
Թող հուրհրա, շողա գալիք սերունդներին՝
Երևանյան անմար լուսաբացը...

Հետպատերազմյան շրջանի մեր պայծառ և կենսալի առօրյայով են ներշնչված նաև Բորյանի «Աբովյանի ծառերը», «Երևան», «Իմ տունը», «Հայրենիքի կանչը» և այլ բանաստեղծությունները։

Բորյանն ինքնուրույն գործերի հետ մեկտեղ տվել է նաև հաջող թարգմանություններ, ինչպես ռուսական, վրացական և համաշխարհային կլասիկներից, այնպես էլ ռուսական, ուկրաինական և բելոռուսական սովետական անվանի գրողներից։ Ուշագրավ են Դյոթեից, Լերմոնտովից, Շևչենկուց, Մայակովսկուց, Յա. Կուպալայից, Սիմոնովից, Սուրկովից և Կուլիշովից կատարված մի շարք թարգմանությունները։

Բորյանն ունի սովետական գրողի համար ամենակարևորը՝ նորի զգացումը, սովետական մարդու հարազատ հուզաշխարհը, որ և երաշխիք է ստեղծագործական այն նոր նվաճումների, որի ձգտումը միշտ վառ է բանաստեղծի մոտ։

Իր առաջին գրքից մինչև վերջին գիրքը, Բորյանը զգալի աճ է ունեցել։ Բանաստեղծի արվեստը հասունացել է, դառնալով ինքնուրույն։ Այդ հասունության կարևոր արտահայտություններից մեկը հեղինակի լեզվական կուլտուրան է։ Բորյանի լեզուն աչքի է ընկնում իր բառային հարուստ ատաղձով։ Բորյանի պոեզիան հարուստ է, գունեղ և արտահայտիչ պատկերներով ու էպիտետներով, ինչպես նաև պոետական ինքնատիպ մտահղացումներով և գյուտերով։ Բորյանի պոետական արվեստի առանձնահատկություններից են հրապարակախոսական պաթոսը, անմիջականությունն ու անկեղծությունը, հեղինակի խորը համոզվածությունը, հանգամանքներ, որ նրա խոսքին տալիս են ներգործող ուժ, նրա բանաստեղծությունները դարձնում ջերմ ու հուզական։

Սակայն չնայած այս ակնհայտ առավելություններին, Բորյանի արվեստը դեռևս հեռու է բարձր ու կատարյալ լինելուց։ Հեղինակը համառորեն պիտի աշխատի իր բանաստեղծությունները պարզ ու հստակ դարձնելու ուղղությամբ։ Բորյանի ոտանավորները հաճախ ծանրամարս են, խճողված, միշտ չէ, երբ հեղինակին հաջողվում է պոետական սեղմ ու արտահայտիչ պատկերների միջոցով ընթերցողին հասցնել իրեն հուզող գաղափարը։

Ռեալիստական պարզ ու արտահայտիչ խոսքը հաճախ փոխարինվում է փքուն, վերամբարձ խոսքով, որի հետևանքով ոտանավորը վեր է ածվում սովորական ճառի։ Վերոհիշյալ թերությունն իր հետ անխուսափելիորեն բերում է մի այլ թերություն, դա խոսքի առատությունն է ի հաշիվ բանաստեղծական պատկերների և էպիտետների։ Բորյանը երկարաբան է։ Նա պետք է համառորեն ձգտի լակոնիզմի, որը բանաստեղծական խոսքը առավել սուր, նպատակային ու գիպուկ դարձնելու կարևոր պայմաններից մեկն է։

Գուրգեն Բորյանը զբաղվում է նաև մանկական գրականությամբ։ Ամենաարժեքավորը Բորյանի մանկական բանաստեղծությունների մեջ—

դա նրանց թեմատիկ թարմությունն է, երեխաների ըմբռնումների, հոգեբանության, հետաքրքրությունների ու զբաղմունքների տեսակետից այդ ոտանավորների կենսաթրթիռ լինելը։

Բորյանի ոտանավորների թեման բազմազան է, ինչպես բազմազան են մանուկների բնավորությունները, հետաքրքրությունները, նրանց շրջապատող երևույթները, նոր սերնդի դաստիարակության հարցերը և այլն։

Իր մի շարք բանաստեղծություններում՝ «Դնայքում», «Ես և արձաղանքը», «Քամի», «Ծառերի օրորը»՝ հեղինակը միանգամայն ինքնատիպ կերպով, երեխաներին հասկանալի միջոցներով պատկերում է նրանց շրջապատող երևույթները, ելակետ ունենալով մանկական աշխարհայացքը, այդ երևույթների մասին մանուկների պատկերացումները։

«Եղևնի», «Դետակ», «Ուշ աշուն», «Զմռան երգ», «Ծիտը», «Խելոք տղան», «Ծիծեռնակ» և այլն ոտանավորներում Բորյանը ձգտում է երեխաների մեջ սեր և հետաքրքրություն արթնացնել գեղի բնությունը, կարեկցանք և հոգատարություն առաջացնել թռչունների նկատմամբ։ Այնուհետև, որոշ ոտանավորների միջոցով Բորյանը զարգացնում է երեխաների գիտողունակությունը («Նկարը)։ Հորինում է դվարճալի ու շատ կողմերով ուսանելի խաղ-ոտանավոր («Մանկական երկախուզին»)։

Իր մանկական բանաստեղծություններում Բորյանը հատուկ ուշադրություն է դարձնում երեխաների բնավորության կրթությանը։ Նա ծաղրում է լայկան, փնթի, կամակոր երեխաներին՝ հակադրելով նրանց խելացի, մաքրասեր, կենսուրախ երեխաներին («Ում նման», «Հայելի», «Հակառակ տղան»)։ Բորյանը երեխաների մեջ զարգացնում է ծնողների հանդեպ երախտագիտության զգացումը («Իմ մայրիկը»)։ Երախտագիտության, սիրո և անձնվիրության զգացումով է ներշնչում Բորյանը երեխաներին՝ հանդեպ Լենինի և Ստալինի՝ որպես նրանց երջանիկ կյանք պարգևողների («Ծաղկեփունջ», «Լենինը և Նիննելը»)։

Բորյանի մանկական բանաստեղծությունների մեջ հանդես են գալիս սովետական երջանիկ, կենսախինդ մանուկները, սիրով, հոգատարությամբ և գուրգուրանքով շրջապատված մատաղ սերունդը։

Ուրգեն Բորյանը ցուցաբերել է իրեն նաև որպես շնորհալի դրամատուրգ։ Նրա «Բարձունքներում» հերոսական դրաման Հայրենական պատերազմի թեմատիկայով գրված, աչքի ընկնող երկերից մեկն է սովետահայ դրամատուրգիայում։ «Բարձունքներում» դրաման հանդես եկավ այնպիսի մի ժամանակ, երբ մեր ինքնուրույն դրամատուրգիայի առաջ պատվավոր խնդիր էր դրված գրական-գեղարվեստական այդ ամենաբարդ և դժվարին ժանրի միջոցով ցույց տալ սովետական ժողովրդի, մասնավորապես նրա վառապանծ բանակի հերոսական պայքարը ընդդեմ ֆաշիստական գավթիչների։

Լիրիկ բանաստեղծ Բորյանի դրամայի ժանրին դիմելը բոլորովին էլ պատահական երևույթ չէր։ Դա պայմանավորված էր նրա իրրև մարտիկ գրողի պատերազմի տարիներին ձեռք բերած այն կենսափորձով, այն բազմահարուստ տպավորություններով, սովետական ժողովրդի պատմության աննախընթաց ծանր ու հերոսական ժամանակների հետ կապված այն ապրումներով ու խոհերով, որոնք բնականաբար պետք է իրենց արտահայտությունը գտնեին գրական երկի որևէ ծավալուն ժանրի մեջ։ Դրամա-

տիկական ժանրը լինելով ամենաբարդ ժանրը, մյուս կողմից առավել խոսուն, անմիջական և մասսայական մի ժանր է, որը և մեծ հնարավորություն է ընձեռնում հեղինակին անմիջական կոնտակտի մեջ մտնելու լայն աուդիտորիայի հետ, բաժանելու նրա հետ իր հույզերն ու խոհերը։

Հեղինակն իր դրաման անվանում է հերոսական։ Դրամայում պատկերվող դեպքերը իրոք հերոսական են։ Հեղինակը տալիս է Հայրենական պատերազմի մեծ և աշխարհացունց դեպքերից միայն մի դրվագ, սակայն այդ մի դրվագում նա կարողանում է խտացնել հիմնականը, տիպիկանը, որով և նրան հաջողվում է ճշմարտացի կերպով բնութագրել հայրենիքի համար զենք վերցրած սովետական մարդկանց։

Ինչ առանձնահատկություններով են բնութագրվում Բորյանի դրամայում սովետական մարդիկ, ինչումն է նրանց ուժի, հզորության և անպարտելիության գաղտնիքը։ Այդ «գաղտնիքը» այն բարձրագույն բարոյականության մեջ է, որը հատուկ է միայն և միայն սովետական մարդկանց։ Ոսկ սովետական մարդկանց բարոյականության հիմքում ընկած է նախ և առաջ նրանց անձնվեր հայրենասիրությունը։ Սովետական հայրենասիրությունը այն հզորագույն ուժն է, որ բոլոր ազնիվ սովետական մարդկանց տոգորում է մի գաղափարով, մի ոգով, մի միասնական ձգտումով։ Խաղաղության տարիներին բաղմադդ ու բաղմալեզու սովետական մարդկանց միասնականությունը արտահայտվում էր շինարարական այն վիթխարի գործունեությամբ, որը հատուկ է սոցիալիզմի երկրին, Հայրենական պատերազմի ժամանակամիջոցում, այդ միասնությունը վերածվեց մի հզորագույն ուժի, որը խորտակելով թշնամուն, ճանապարհ հարթեց սովետական և դեմոկրատական երկրների ժողովուրդների արագ և անկաշկանդ զարգացմանը դեպի կոմունիզմ։

Բորյանի հերոսներին ամենածանր կացության մեջ ոգու ամրություն և հաղթանակի հավատ է ներշնչում հայրենիքի սերը, որը կազմում է նրանց էությունը։ Անձնվեր հայրենասեր պարտիզան Սեմյոն պապի ռեպլիկին թե՝ «Հայրենիքի համար արյունդ էլ պիտի տաս, քաղցած էլ կարող ես լինել», դրամայի հերոսները արձագանքում են ամենաջերմ հայրենասիրական խոսքերով։ Սովետական մարդկանց համար հայրենիքը դա վերացական մի խոսք չէ։ Այն կոնկրետ է, իրական, ինչպես սեփական երջանկությունը։ Սովետական լայնածավալ երկրի յուրաքանչյուր անկյունում մարդը երջանիկ է։ Դրանով էլ հենց սովետական Հայրենիքը թանդ է և ուրբելի ամենքի համար։

Բորյանի դրամայի գործողության վայրը Կովկասյան ռազմաճակատն է։ Կովկասի պաշտպանությանը ռուս մեծ ժողովրդի հերոսական զավակների հետ մեկտեղ մասնակցում են ուկրաինացիք, հայեր, վրացիներ։ Ամենքի համար էլ, անկախ նրանց ազգային պատկանելիությունից, Կովկասը, ինչպես սովետական հողի յուրաքանչյուր անկյուն, հարազատ հայրենիք է։ Ահա այս գիտակցության վրա է հիմնվում սովետական ժողովուրդների անխորտակելի միասնությունը, որը ցայտուն կերպով դրսևորվեց հատկապես Հայրենական պատերազմի ժամանակաշրջանում։

Բորյանի հերոսները՝ մայոր Օլովը, կոմիսար Ավալյանը, կապիտան զին-թղթակից Սվետլովը, կապիտան Արաշիանն, Սեմյոն պապը, բժշկուհի Անահիտը, սերժանտներ Դիմիտրին, Վաչեն և այլն—սրանք բոլորն էլ

ռեալիստորեն գծագրված իսկական սովետական մարդիկ են՝ բարձր բարոյական հատկությունների տեր, ազնիվ, անձնվեր, տոկուն, տոգորված մի ընդհանուր գաղափարով, միևնույն ձգտումով, միևնույն սիրով և ատելությամբ։ Նրանցից հեռու է էգոիզմը, փառասիրությունը, մորթեպաշտությունը։ Բորյանի դրամայի ընթերցողը, կամ դիտողը խորապես համակվում է նրա հերոսներով, հավատում նրանց գործի հաջողությանը, նրանց մղած պայքարի հաղթական վախճանին։ Զնայած բացառիկ դաժան պայմաններին, որի մեջ գտնվում է Օլովի գումարտակը՝ շրջապատման մեջ լինելու պատճառով, բայց և այնպես հրամանատարից սկսած մինչև վերջին մարտիկը, համակված են մի պայծառ լավատեսությամբ, մի լուսավոր կենսախնդությամբ, որը և ջերմացնում է այդ դաժան մթնոլորտը։

Պիեսի ընդհանուր տրամադրության մեջ, սակայն, դիսոնանս է մտցնում ծանր վիրավոր մայոր Դանիելյանի մահվան պատկերը, որը, ի դեպ, պիեսի սյուժետային գծից բոլորովին դուրս մի ավելորդ կցորդ է։ Բարձր տրամադրությամբ և հերոսականությամբ շնչող դրամայի մեջ այդ պատկերը մտցնում է մելոդրամատիկ տարր, որը, անշուշտ, իջեցնում է երկի թե գրական-գեղարվեստական և թե իդեական արժեքը։

Պիեսը զերծ չէ նաև այլ կարգի թերություններից։ Օրինակ, անհրաժեշտ չափով չի պատճառաբանված Օժիգովի դավաճանությունը, պիեսում կան անորոշություններ, ինչպես օրինակ՝ Սեմյոն պապի գերմանացիների կողմից բռնվելը և այլն։

Գուրգեն Բորյանը ստեղծագործական վերելք ապրող հեղինակ է։ Նրա ստեղծագործական անցած ուղին այդ է վկայում։ Բորյանի ստեղծագործական հաջողությունները պայմանավորված են նրա հասարակական ակտիվ խառնվածքով, սովետական կյանքի նկատմամբ ունեցած հարազատ ջերմ զգացումներով։ Այդ է այն միակ ճիշտ ուղին, որով ընթանալով հեղինակը կհասնի նորանոր նվաճումների, դարձնելով իր արվեստը մեր մեծ էպոխային արժանի իսկական բարձր արվեստ։

Гурген Борян

(Резюме)

Творчество Боряна проникнуто духом большевистской партийности. Самоотверженно служить советской родине, партии Ленина—Сталина, всеми силами способствовать ее борьбе во имя победы коммунизма—таков внутренний пафос творчества Боряна.

Тема патриотизма является основной струной лирики Боряна. Любовь к Советской родине переходит у Боряна в чувство глубокого и искреннего восхищения, она пронизывает все существо поэта, это горячее, оптимистическое чувство питает и согревает все его творчество. Патриотизм Боряна конкретен. Это выражается, прежде всего, в изображении жизни и повседневного быта свободно творящих советских людей, и, в частности, советской молодежи. Чувства человека и поэта, неразрывно

связанные с советской жизнью, нашли свое яркое выражение также в любовной лирике Боряна и в песнях о природе.

В дни Великой Отечественной войны патриотическое слово Боряна вспыхивает с новой силой, выражая боевой дух этих героических дней.

Как поэт-борец, четыре года находившийся в боевых рядах армии, Борян изображает в своих произведениях передовых людей этих великих героических дней, самоотверженных советских патриотов, на своих плечах вынесших все трудности войны и ценою своей жизни завоевавших победу.

Особенностью поэтического искусства Боряна является публицистический пафос, непосредственность и искренность чувств. Не всегда, однако, Боряну удается путем сжатых и выразительных образов довести до читателя волнующие его идеи. Горячее и волнующее слово иногда заменяется у автора холодными рассуждениями, которые превращают поэтическое произведение в сухую риторику.

Г. Борян занимается также детской литературой. Самым ценным в его произведениях для детей является свежесть тематики, жизнерадостность детских восприятий, правдивое выражение их психологии, интересов и чувств.

Г. Борян проявил себя также даровитым драматургом. Его героическая драма «На высотах» на тему из событий Великой Отечественной войны является одним из лучших произведений советской армянской драматургии.